



«ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՈՒՍՈՒՑՈՒՄ»/ԳՈՒՄ ՀԿ

PARTNERSHIP AND TEACHING/P&T NGO

Տ ԱՐ Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2014-2015

ANNUAL REPORT

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացու 41,

ք. Երևան, Ն. Զարյան 73/1

Հեռ. 0284/ 2-23-19, 094 20 18 17

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՍՔ
- ❖ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
- ❖ ՄԵՐ ՄԱՍԻՆ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի ԿՈՂՄԻՑ 2014 -2015թթ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐ**
 - ✚ «Պաշտպանված լինելու իմ իրավունքը»
 - ✚ Երևանի թիվ 127 դպրոցի մասնակի վերանորոգում

- **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԻՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**
 - ✚ «Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության»
 - ✚ «ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացների իրականացում 2»
 - ✚ «Առողջության պահպանման իմ իրավունքը»
 - ✚ «Պաշտպանված լինելու իմ իրավունքը»

- **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**
 - ✚ Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն 2
 - ✚ Համայնքային զարգացման և քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրերի ադմինիստրատիվ աջակցություն
- ❖ **ՀԱՇՎԱՆՂԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ**
 - ✚ «Ես կարող եմ»
 - ✚ Զարդենք կարծրատիպերը, բացենք դռները
- **ԳՈՒՄ ՍՊՈՒԿ-ի ԿՈՂՄԻՑ 2014-2015ԹԹ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
 - Կրթական ոլորտի դասընթացներ ու խորհրդատվություններ
 - Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) ուղղված ծառայություններ
 - Տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ ու խորհրդատվություններ
 - «Կամք+» թերթի տպագրություն
 - Համակարգչային ծառայություններ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի 2014-2015Ճթ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
- ❖ ԳՈՒՄ ՍՊՈՒԿ-ի 2014-2015թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի ԽՈՐՀՈՒՐԴ
- ❖ ԳՈՒՄ ՀԿ-ի 2014-2015թթ. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ
- ❖ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ
- ❖ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

❖ **ԳՈՒՄ ՀՎ-ի ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՍՔԸ**

Հարգելի ընթերցող,

Ինձ համար հասարակական կազմակերպության գործունեության հաջողության գրավականներից մեկն էլ իր շահառուներին, դոնորներին, գործընկերներին ու համախոհներին հաշվետու լինելու նախապայմանն է:

Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ ՀՎ-ն իր 14-ամյա գործունեության ընթացքում որդեգրել է այդ գաղափարը և իր գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ձեռք է ներկայացնում արդեն ավանդական դարձած տարեկան ամփոփ հաշվետվությունների տեսքով: ՀՎ-ն արդեն տպագրել է իր 2007թ., 2005-2008թթ., 2009-2011թթ. գործունեության հաշվետվությունները:

ԳՈՒՄ ՀՎ-ի 2014-2015թթ գործունեության հաշվետվությունը նպատակ ունի ներկայացնելու նշյալ ժամանակահատվածում կազմակերպության իրականացրած աշխատանքը, շահառուներին և նրանց կյանքում կատարված փոփոխությունները, ձեռքբերումները հետագա գործունեության ընթացքում որպես այցեքարտ օգտագործելու համար:

2014-2015թթ ընթացքում ԳՈՒՄ ՀՎ-ն ընդլայնել է իր գործունեության շրջանակը^a իրականացնելով նախաձեռնություններ՝ ուղղված կրթական ոլորտի հիմնախնդիրների լուծմանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը, Տեղական ինքնակառավարման մարմինների /ՏԻՄ/ կարողությունների զարգացմանը, երիտասարդության զբաղվածության ոլորտի խթանմանը, ինչպես նաև հանդես եկել համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններով:

Հաշվետվությունը ներառում է նաև ԳՈՒՄ ՍՊԸ-ի կողմից 2014-2015թթ ընթացքում ԳՈՒՄ ՀՎ-ի նպատակային խմբերին մատուցված ծառայություններն ու խորհրդատվությունները:

Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել ԳՈՒՄ ՀՎ-ի վեբ կայքում՝ www.gumiso.am:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում հասարակայնության հետ կապերի տարբեր միջոցներով միշտ հետադարձ կապ է հաստատել իր շահառուների, համախոհների և գործընկերների հետ^a փորձելով նրանց արձագանքն ու առաջարկությունները դարձնել հետագա աշխատանքի ուղենիշ:

Առիթն օգտագործելով՝ ես ևս մեկ անգամ շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր դոնոր, գործընկեր, համագործակից կազմակերպություններին, համախոհներին, բոլոր նրանց, ովքեր աջակցել են մեզ մեր գործունեության ընթացքում իրականացվող բազում նախաձեռնությունները հաջողությամբ կյանքի կոչելու գործում:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր շահառուներին, ովքեր հավատացել ու վստահել են մեզ՝ որպես իրենց խնդիրների լուծմանը շահագրգիռ ու մտահոգ կազմակերպություն:

Արտաշես Տոռոզյան, ԳՈՒՄ ՀՎ-ի գործադիր տնօրեն

❖ ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Գործընկերություն և ուսուցում» (ԳՈՒՄ) ՀԿ-ն 2000 թվականին հիմնադրված տեղական շահույթ չհետապնդող կազմակերպություն է հետևյալ առաքելությամբ՝ կրթություն և համագործակցություն հանուն քաղաքացիական հասարակության զարգացման:

ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է Հայաստանում քաղաքացիական հասարակության առաջընթացին՝ նպաստելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների(ՔՀԿ), կրթական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների/ՏԻՄ/ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործընթացներին:

ԳՈՒՄ ՀԿ-ն Հայաստանում հայտնի է որպես ծառայություն մատուցող առաջատար կազմակերպություն: ԳՈՒՄ ՀԿ-ն ծառայություններ է մատուցում 2003թ. իր հիմնադրած ԳՈՒՄ ՍՊԸ-ի միջոցով: ՀԿ-ն իր գործունեության ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր և մատուցել ծառայություններ՝ ուղղված կրթական /կառավարում, ուսուցման նոր մեթոդներ, մասնագիտական.../ և համայնքային ոլորտների հիմնախնդիրների լուծմանը, համայնքների զարգացման ռազամավարությունների մշակմանը, ինչպես նաև հանդես եկել հասարակության տարբեր խմբերի շահերի պաշտպանության նախաձեռնություններով:

2009թ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաստագրվել է ՔԻ-ի կազմակերպության կողմից, որը գնահատել է իր գործընկեր կազմակերպության ինստիտուցիոնալ զարգացման համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Գնահատումն իրականացվել է Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ և ՔԻ-ի մասնագետների կողմից՝ ըստ վեց հիմնական ոլորտների, որոնք ներառում են՝ կազմակերպության կառավարում և ղեկավարում, ֆինանսական կայունություն, արտաքին կապեր, ծառայությունների մատուցում և որակի վերահսկում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, ֆինանսական կառավարում և դրամաշնորհների ղեկավարում:

«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հավաստագրում ստացավ՝ ևս մեկ անգամ հաստատելով իր համբավը որպես միջազգային չափանիշներով աշխատող հուսալի և առաջատար կազմակերպություն:

Իր գործունեության աշխարհագրությունն ընդլայնելու նպատակով 2013թ. ԳՈՒՄ ՀԿ-ն գրասենյակ է բացել նաև Երևան քաղաքում՝ համալրելով աշխատակազմը նոր անդամներով ու պրակտիկանտներով:

❖ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Կրթություն և համագործակցություն՝ հանուն քաղաքացիական հասարակության

❖ ՄԵՐ ՏԵՍԱԿԱՆԸ

Լավ մարդիկ են մատուցում որակյալ ծառայություններ թիրախներին

Մեր կարգախոսը

Համագործակցենք այսօր վաղվա համար

❖ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- Թափանցիկություն և հաշվետվողականություն
- Հստակ հաղորդակցություն
- Պատասխանատվությունների և իրավունքների հստակություն
- Որակյալ ծառայություններ
- Համագործակցություն
- Մեծ և փոքր աշխատանքների չտարբերակում
- Ոչ ֆորմալ կրթության կարևորում

❖ ՄԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Նպաստել ժողովրդավարական, իրավական և բարեկեցիկ պետության կայացմանը
- Աջակցել քաղաքացիական հասարակության կայացմանն ու զարգացմանը
- Աջակցել հանրային քաղաքականության ոլորտում փոփոխություններ կատարելու գործընթացների իրականացմանը
- Նպաստել հանրապետության կրթական համակարգում իրականացվող բարեփոխումներին
- Նպաստել կրթական համակարգի կառավարման ժողովրդավարացմանը
- Նպաստել համայնքային զարգացման գործընթացներին

❖ **ՄԵՐ ԴՈՆՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ**

ԳՈՒՄ ՀԿ-ն 2014-2015թթ իր նախաձեռնություններն իրականացրել է ներքոնշյալ կազմակերպությունների ֆինանսական և տեխնիկական աջակցությամբ

ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ
Վորլդ Վիժն Հայաստան»	<p>➤ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԻՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ</p> <ul style="list-style-type: none"> «Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում՝ ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության» Նոր հնարավորություններ երիտասարդների համար
«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն	<p>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.</p> <ul style="list-style-type: none"> «Տրամադրել ադմինիստրատիվ աջակցություն համայնքային և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված գործողությունների իրականացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում» «Համտես-փառատոնի ադմինիստրատիվ աջակցություն» «Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն 2» «Առողջության պահպանման իմ իրավունքը» «ՏԻՄ-երի համար վերապատրաստման դասընթացների իրականացում 2»
«Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն	<p>ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲԱԴԿԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏ</p> <p>Ես կարող եմ Զարդենք կարծրատիպերը, բացենք դմները</p>
Փի-էյչ Ինթերնեշնլի» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ	<p>Կրթական բարեփոխումներ</p> <p>«Պաշտպանված լինելու իմ իրավունքը»</p>
ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն	<p>ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐ</p> <p>Երևանի թիվ 127 դպրոցի մասնակի վերանորոգում</p>
ՀՀ-ում Լիտվայի դեսպանատուն	<p>Սոցիալական ոլորտ Պահպանենք կյանքեր</p>

2014-2015թթ. իր գործունեության ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն համագործակցել է ներքոնշյալ կազմակերպությունների ու կառույցների հետ

- ✓ Քաունթերփարթ ինթերնեշնլ Հայաստանյան ներկայացուցչություն
- ✓ Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ
- ✓ ՀԿ կենտրոն
- ✓ Վորլդ Վիժն Սիսիանի ՏՁԾ
- ✓ Վորլդ Վիժն Կապանի ՏՁԾ
- ✓ Վորլդ Վիժն Երևանի ՏՁԾ
- ✓ Վորլդ Վիժն Ապարանի ՏՁԾ
- ✓ Վորլդ Վիժն Տավուշի ՏՁԾ
- ✓ Վորլդ Վիժն Ստեփանավանի ՏՁԾ
- ✓ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ
- ✓ ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
- ✓ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամ
- ✓ Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն
- ✓ Գորիսի մամուլի ակումբ ՀԿ
- ✓ Գորիսի կանանց զարգացման Ռեսուրս կենտրոն հիմնադրամ
- ✓ Գորիսի սերունդ ՀԿ
- ✓ Էկո – Սիս ՀԿ
- ✓ Ընդդեմ իրավական կամայականության ՀԿ
- ✓ Իրավունքների տեղեկատվական կենտրոն/ԻՏԵԿ ՀԿ
- ✓ Ասպարեզ ՀԿ
- ✓ Բարի երթ ՀԿ
- ✓ Գորիսի ստեղծագործողներ ՀԿ
- ✓ Գորիսի անգլերենի ուսուցման կենտրոն ՀԿ
- ✓ Սյունիքի երիտասարդ բժիշկներ ՀԿ
- ✓ Սոսե կանանց հիմնահարցեր ՀԿ
- ✓ Գորիսի նոր սերունդ ՀԿ
- ✓ Սալվարո գյուղական զարգացման հիմնադրամ
- ✓ Կապանի կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ
- ✓ Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն ՀԿ
- ✓ Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ
- ✓ Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ

**2014-2015թթ. ԳՈՒՄ ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**

✚ «Պաշտպանված լինելու իմ իրավունքը»

Պայմանագրի համարը	SG-GORIS
Դոնոր կազմակերպությունը	«Փի-Էյչ Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղը
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս
Ծրագրի տևողությունը	2013թ. դեկտեմբեր-2014թ. ապրիլ
Դրամաշնորհի չափը	1.600.000 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.511.520 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	3.111.520 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բացահայտել անչափահասների նկատմամբ կիրառվող բռնությունները, նպաստել դրանց կանխարգելմանը և իրենց իրավունքների վերաբերյալ անչափահասների իրազեկության բարձրացմանը:

Համագործակից կազմակերպություն

- ՎԿ Հայաստանի Սիսիանի և Կապանի ՏԶԾ-ներ
- Սյունիքի Ախ ցանց

Շահառուներ

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի և Կապանի տարածաշրջանների 32 համայնքի անչափահասներ

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում սոցիոգիական հարցումներ են իրականացվել են ծրագրի շահառու դպրոցների 6-12-րդ դասարանների աշակերտների, ուսուցիչների և համայնքաբնակների շրջանում /ծնողներ, այլ անդամներ/ պարզելու երեխաների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերը, ինչպես նաև հարցվողների դիրքորոշումը երեխաների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների նկատմամբ:

Ծրագրի իրականացման գործընթացում ԳՈՒՄ ՀԿ-ն ընդգրկել է Սյունիքի Աշակերտական խորհուրդների ցանցի անդամներն, ովքեր ծրագրի մեկնարկից մինչև արդյունքների ամփոփում ակտիվ մասնակցություն են ունեցել բոլոր գործընթացներում: Հարցումների վերլուծության արդյունքների ներկայացման նպատակով Գորիսում իրականացվել «Երեխաների բռնության դեպքերը և դրանց կանխարգելման մեխանիզմները ՀՀ Սյունիքի մարզում» թեմայով մարզային ֆորում:

Ֆորումին հրավիրվել են Սյունիքի ԱԽ ցանցի անդամներ և խորհրդատուներ, ՎՎ Սիսիանի և Կապանի ՏԶԾ-ների աշխատակիցներ, ՀՀ Սյունիքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ներկայացուցիչներ, Սյունիքի մարզի իրավապաշտպան ՀԿ-ներ, Ոստիկանության անչափահասների հարցերով զբաղվող տեսուչներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, ուսուցիչներ, ծնողներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, լրագրողներ, Համայնքային զարգացման աջակցության ցանցի/ՀԶԱՑ անդամ կազմակերպություններ: Ֆորումի արդյունքում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ մշակվել են Երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

Ծրագրի շրջանակներում Սյունիքի ԱԽ ցանցը շահառու բոլոր համայնքներում տեղեկատվական պաստառներով իրականացրել են «Առանց բռնության ապրելու իմ իրավունքը» թեմայով իրազեկման քարոզարշավներ, որոնց ընթացքում ցանցի անդամները համայնքներում տարածել են տեղեկատվական բուկլետներ և թռուցիկներ: Ծրագրի շրջանակներում տպագրվել է Սյունիքի ԱԽ ցանցի Արձագանք թերթի հատուկ համար՝ նվիրված ծրագրի լուսաբանմանը:

✚ Երևանի թիվ 127 դպրոցի մասնակի վերանորոգում

Պայմանագրի համարը	Դրամաշնորհային պայմանագիր
Դոնոր կազմակերպությունը	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատուն
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ, ք.Երևան, Պ.Սևակի 11, Լ.Արիսյանի անվան հ.127 ավագ դպրոց
Ծրագրի տևողությունը	Փետրվար – սեպտեմբեր 2014թ
Դրամաշնորհի չափը	33.293.641 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Իրականացնել Երևանի թիվ 127 ավագ դպրոցի վերանորոգման աշխատանքներ:

Շահառուներ

Երևանի թիվ 127 ավագ դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ ու ծնողներ

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում մասնակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Երևանի թիվ 127 ավագ դպրոցում, մասնավորապես հիմնանորոգվել են դպրոցի մուտքը, առաջին հարկի միջանցքը, երեք հարկերի վրա գտնվող 6 սանհանգույցները: Դպրոցի մուտքը հարմարեցվել է հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:

Սանիտարահիգիենիկ նորմերի վերաբերյալ դպրոցի խորհրդակցական մարմինների իրազեկությունը բարձրացնելու նպատակով ԳՈՒՄ ՀԿ-ն իրականացրել է իրազեկման դասընթացներ դպրոցի աշակերտների, ուսուցիչների և ծնողների մասնակցությամբ:

Ծրագրի արդյունքում Երևանի թիվ 127 ավագ դպրոցի սանիտարական հարմարություններն արդեն համապատասխանում են սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին:

Հաճելի փոփոխությունները ոգեշնչել են ուսուցիչներին, աշակերտներին ու ծնողներին:

Մեծացել է այլ դպրոցներից թիվ 127 ավագ դպրոց աշակերտների հաճախելիությունը: Դպրոցի մուտքն ավելի հարմար ու ակնահաճո է դարձել աշակերտների, ծնողների և ուսուցիչների համար: Երեխաները օգտվում են հարմարավետ դուգարաններից՝ սանիտարահիգիենիկ համապատասխան չափորոշիչներին համապատասխան:

Նախագիծը շատ դրական ազդեցություն է ունեցել դպրոցի վարկանիշի բարձրացման վրա: Մեկ տարվա ընթացքում աշակերտների հաճախելիությունը աճել է 10% -ով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

✚ Հանրային իրազեկությունը որպես համայնքային հիմնախնդիրների լուծման հնարավորություն 2

Պայմանագրի համարը	ARM-C2-GCSO-S-USG-2013-01
Դոնոր կազմակերպությունը	«Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	Սյունիք և Վայոց Ձորի մարզեր
Ծրագրի տևողությունը	2014թ. հուլիս-2014թ. օգոստոս
Դրամաշնորհի չափը	1 800 000 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակ

Բարձրացնել համայնքների խոշորացման փորձնական ծրագրում ներգրավված համայնքներում համայնքաբնականների իրազեկությունը՝ իրականացվող գործընթացների վերաբերյալ:

Շահառուներ

ՀՀ համայնքների բնակիչներ

Արդյունքներ

Նախաձեռնության իրականացումը ենթադրում էր «Կամք+ե թերթի` համայնքների խոշորագույն գործընթացների լուսաբանմանը նվիրված հատուկ համարի պատրաստում և տարածում ՀՀ բոլոր մարզերի համայնքներում:

Ծրագրի արդյունքում պատրաստված «Կամք+ե թերթի հատուկ թողարկումը նվիրվել է համայնքների խոշորագույն գործընթացի բազմակողմանի լուսաբանմանը` ներառելով և՛ ՀՀ տարածքային կառավարման նախարարության, և՛ անկախ փորձագետների, և՛ հասարակական սեկտորի ներկայացուցիչների, և մարզպետարանների համապատասխան վարչությունների, և՛ համայնքների ղեկավարների, և՛ համայնքային ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչների դիրքորոշումներն ու տեսակետները նախատեսվող բարեփոխման վերաբերյալ:

Համայնքների խոշորագույն բարեփոխման վերաբերյալ թերթում ներկայացված փաստարկներն ու բազմազան դիրքորոշումները օգնել են ընթերցողին հստակեցնել իր դիրքորոշումը համայնքների խոշորագույն վերաբերյալ` համադրելով խոշորագույն ծրագրի առավելությունները, դրական կողմերն ու հնարավոր ռիսկերը:

«Կամք+ե թերթի` համայնքների խոշորագույն գործընթացների լուսաբանմանն ուղղված հատուկ համարը տպագրվել է 2000 տպաքանակով, 2 տպագիր մամուլ ծավալով և տարածվել ՀՀ ողջ տարածքով` մարզպետարանների, համայնքապետարանների միջոցով:

Համայնքային զարգացման և քաղաքացիական հասարակության աջակցության ծրագրերի ադմինիստրատիվ աջակցություն

Պայմանագրի համարը	ARM-C1-PS-RC-S-2013-03
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչություն
Ծրագրի իրականացման վայրը	Մյունիքի և Վայոց Ձորի մարզեր

Ծրագրի տևողությունը	2012թ. հոկտեմբեր – 2014-հունիս
Դրամաշնորհի չափը	25.091.612 ՀՀ դրամ 9.310.410 ՀՀ դրամ 9.794.689 ՀՀ դրամ 19.997.498 ՀՀ դրամ 17.760.711 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	851.400 ՀՀ դրամ 762.600 ՀՀ դրամ 762.600 ՀՀ դրամ 767.768 ՀՀ դրամ 741.652 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարձրացնել հանրության տեղեկացվածությունը և արդյունավետ քաղաքացիական մասնակցությունը տեղական և ազգային մակարդակներում, ինչպես նաև նպաստել ավելի մասնակցային, ապակենտրոնացված, արդյունավետ արձագանքող տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանը, որը կօժանդակի Հայաստանում ընթացող ժողովրդավարացման գործընթացին:

Ծրագրի շահառուներ

Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 16 համայնք/Միսիան, Մեղրի, Կապան, Արծվանիկ, Սպանդարյան, Աշոտավան, Խնձորեսկ, Շինուհայր, Հալիձոր, Քարահունջ, Վայք, Գոմք, Գետափ, Բարձրունի, Հերիեր, Արենի/:

Արդյունքներ

Քաունթերփարթ ինթերնեշնլի կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության՝ ծրագրի շրջանակներում ԳՈԻՄ ՀԿ-ի համայնքային զարգացման թիմը համակարգել է Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի շահառու 16 համայնքում իրականացվող համայնքային զարգացման գործընթացները:

ԳՈՒՄ ՀԿ-ն Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի ծրագրի շահառու համայնքներին տրամադրել է նյութատեխնիկական և ադմինիստրատիվ աջակցություն համայնքային զարգացմանն ուղղված գործողությունների իրականացման նպատակով:

Ծրագրի շրջանակներում շահառու համայնքներում ձևավորվել են Համայնքային ակտիվ խմբեր/ՀԱԽ և Համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբներ/ՀԵՆԱ-ներ, որոնց օգնությամբ շահառու համայնքները ներկայացել են համայնքային ժողովների ընթացքում վերհանված և համայնքի բնակիչների կողմից առաջնահերթ ձանաչված խնդիրների հիման վրա պատրաստված ծրագիր-առաջարկներ:

Դոնոր կազմակերպությունը քաղաքային համայնքների կողմից ներկայացված ծրագրերը (ՏԻՄ խրախուսման ծրագրեր) ֆինանսավորել է առավելագույնը 6.2 մլն. դրամի չափով, իսկ ՏԻՄ-երի ներդրումները կազմել են հայցվող գումարի 40% -ը:

Գյուղական համայնքներում իրականացվել են երկու տեսակի ծրագիր՝ Համայնքային զարգացման և քաղաքացիական նախաձեռնությունների դրամաշնորհային ծրագիր (դոնորի ներդրում 1.7 մլն. դրամ, ՏԻՄ ներդրում 20%-ից ոչ պակաս) և ՏԻՄ խրախուսման ծրագիր(դոնորի ներդրում 3.5 մլն. դրամ, ՏԻՄ ներդրում 40% -ից ոչ պակաս):

Ծրագրերի իրականացման այսպիսի մասնակցային, համատեղ մոտեցումները հիմք հանդիսացան, որպեսզի իրականացված և դեռ իրականացվելիք համայնքային բոլոր ծրագրերը մեկնարկեն և ավարտվեն բարեհաջող:

Ծրագրի շրջանակներում ԳՈՒՄ ՀԿ-ն աջակցում է շահառու համայնքներում քաղաքացիական նախաձեռնությունների և համայնքային զարգացման ծրագրերի նախագծմանը՝ ապահովելով սերտ համագործակցություն համայնքային աշխատանքային խմբերի, հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ-երի ու մասնավոր հատվածի միջև:

2012-2014թթ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում շահառու համայնքներին տրամադրվել են համայնքային զարգացման և քաղաքացիական նախաձեռնությունների ու ՏԻՄ խրախուսման դրամաշնորհներ, որոնց շրջանակներում համայնքները հանդես են եկել համայնքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններով:

ԳՈՒՄ ՀԿ-ի «Կամք+» թերթը հետևողականորեն լուսաբանել է ծրագրի շրջանակներում ՀԱԽ-երի և ՀԵՆԱ-ների նախաձեռնությունները:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԻՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- ✦ Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացում` ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության

Պայմանագրի համարը	Sisian ADP/CBO-02/FY12 WVA/SIS ADP/CBO-02/FY14 WVA/SIS ADP/CBO-02/FY14
Դոնոր կազմակերպությունը	Վորլդ Վիժն Հայաստան
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի և Սիսիանի տարածաշրջաններ
Ծրագրի տևողությունը	2014թ. սեպտեմբեր-2015թ. սեպտեմբեր
Դրամաշնորհի չափը	6 436 931 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների կարողությունների զարգացմանը` ի օգուտ քաղաքացիների շահերի պաշտպանության:

- Նպաստել համայնքների զարգացմանը` շահերի պաշտպանության և համայնքային մասնակցության գործիքների կիրառմամբ:

Համագործակից կազմակերպություն

- Վորլդ Վիժն Սիսիանի ՏԶԾ
- Վորլդ Վիժն Կապանի ՏԶԾ

Ծրագրի շահառուները

Սյունիքի մարզի Գորիսի, Սիսիանի և Կապանի տարածաշրջանների 41 համայնքների բնակիչներ

Արդյունքներ

2014-2015թթ. ԳՈՒՄ ՀԿ-ն շարունակել է համագործակցությունը Վորլդ Վիժն Հայաստանի Սիսիանի և Կապանի ՏԶԾ-ների հետ:

Ծրագրի շրջանակներում 2014-2015թթ ընթացքում ԳՈՒՄ ՀԿ-ն շարունակել է զարգացնել Աշակերտական խորհուրդների ցանցային աշխատանքի ձևավորման ուղղությամբ աշխատանքները` իրականացնելով Սյունիքի ԱԽ ցանցի անդամների կարողությունների զարգացմանն ուղղված ամառային և աշնանային դպրոցներ:

Գործընկերության շրջանակներում իրականացվել են կրթության, առողջապահության, Տեղական ինքնակառավարման մարմինների և երիտասարդության զբաղվածության ոլորտի մարզային համաժողովներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ :

Մարզային համաժողովների արդյունքում մշակվել են վերոնշյալ ոլորտների բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթներ և հասցեագրվել համապատասխան ոլորտներում որոշումներ կայացնողներին :

Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև ենթածրագրեր, որոնք ներկայացվում են ստորև.

**Ենթածրագիր*

2014թ. Համայնքային զարգացման աջակցության ցանցի/ՀՁԱՑ անդամ կազմակերպությունների իրականացրած նախաձեռնություններ

Վորլդ Վիժն Սիսիանի ՏԶԾ-ի համագործակցության շրջանակներում ՀՁԱՑ-ի անդամ «Գորիսի մամուլի ակումբ», «Իրավունքների տեղեկատվական կենտրոն», «Սոսե կանանց հիմնահարցեր և «Գորիսի նոր սերունդ» կազմակերպությունները 2014թ ապրիլ-հուլիս ամիսների ընթացքում իրականացրել են 2 կոալիցիոն ծրագրեր:

1. **Գորիսի մամուլի ակումբ», Իրավունքների տեղեկատվական կենտրոն»** ՀԿ-ները միասին իրականացրել են Ես մասնակցում եմ իմ համայնքի զարգացմանը» կոալիցիոն ծրագիրը: Ծրագիրը նպատակ ուներ աջակցել Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների 5 գյուղական համայնքներին մշակելու հարկահավաքման ձևեր մեխանիզմներ:

Ծրագրի արդյունքում կատարվել է Սյունիքի մարզի Հալիձոր, Հարժիս, Աշոտավան համայնքների հարկերի և տուրքերի գանձման քաղաքականության ուսումնասիրություն, որի հիման վրա պատրաստվել է զեկույց: Թիրախ համայնքներում հարկերի հավաքագրման նպատակների ու կարևորության մասին համայնքաբնակների իրազեկության նպատակով պատրաստվել է 3 տեսանյութ: Մշակվել է համայնքային բյուջեի եկամուտներ ապահովող համայնքների խրախուսման կարգ:

2. **«Սոսե» կանանց հիմնահարցեր և «Գորիսի նոր սերունդ»** ՀԿ-ները միասին իրականացրել են Առողջ մանկություն» ծրագիրը: Ծրագիրը նպատակ ուներ նպաստելու ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ, Շինուհայր, Անգեղակոթ, Շաքի համայնքների նախակրթարաններում երեխաների առողջության պահպանությանը:

Ծրագրի արդյունքում բարձրացել է ծնողական խորհրդի մասնակցությունը նախակրթարաններում երեխաների առողջության պահպանության խնդիրների լուծման գործում: Բարձրացել է նախակրթարանների բուժսպասարկման ուղղությամբ վերահսկողության մակարդակը մարզային պատասխանատու մարմինների կողմից:

**Ենթածրագիր.*

Նոր հնարավորություններ երիտասարդների համար

Ծրագրի նպատակը

Նպաստել Սյունիքի մարզի երիտասարդների գործազրկության մակարդակի նվազեցմանը՝ խթանելով աշխատաշուկայում երիտասարդության մրցունակության բարձրացումը:

Համագործակից կազմակերպություն

- «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Գորիսի զբաղվածության տարածքային կենտրոն
- «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Սիսիանի զբաղվածության տարածքային կենտրոն

Շահառուներ

Ծրագրի ուղղակի շահառուները Գորիսի և Սիսիանի ՎՎ թիրախ համայնքների երիտասարդներն են, իսկ անուղղակի շահառուները՝ ՀՀ Սյունիքի մարզի բոլոր համայնքների երիտասարդները:

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում ստեղծվել է էլեկտրոնային շփման օնլայն հարթակ՝ www.syunikjob.am, գործատուների, գործազուրկների և կրթական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար:

Մշակվել են երիտասարդների աշխատանքային պրակտիկայի և կամավորական աշխատանքի իրականացմանն ուղղված ուղեցույց-ընթացակարգեր:

Գորիսի և Սիսիանի Զբաղվածության տարածքային կենտրոնների/ՋՏԿ-ների և գործատուների հետ համագործակցության արդյունքում ստեղծվել են արտադրական պրակտիկա անցնելու, մասնագիտություն և վերամասնագիտություն ստանալու հնարավորություններ Սյունիքի մարզի երիտասարդների համար:

- ✓ ՋՏԿ-ների և գործատուների հետ համագործակցության արդյունքում
- ✓ 2014 թ. հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Գորիսում արդադրական պրակտիկա է անցել 5 երիտասարդ/ 3 հոգի էմմա Ասլանյան և որդիներ ՍՊԸ-ի Արեգ դեղատանը, Երկու հոգի Մարինե Շալունց ԱԶ դեղատանը/, որոնցից երեք հոգին պրակտիկայի ավարտին տեղավորվելու են աշխատանքի համապատասխան գործատուների մոտ
- ✓ Հոկտեմբերի 1-ից Գորիսում՝ ԳՈՒՄ ՍՊԸ-ի նորաստեղծ կարի արտադրամասում, ուսուցում են անցել 11 հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև երկու երիտասարդ
- ✓ Սեպտեմբեր ամսից Գորիսի կանանց զարգացման Ռեսուրս կենտրոն հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում Շինուհայր համայնքում Բրդի լվացման կետում ուսուցում են անցել 5 երիտասարդներ
- ✓ Սիսիանում ՋՏԿ-ի պետական աջակցության ծրագրի շրջանակներում ուսուցում է անցել 6 երիտասարդ, որոնցից 4 հոգին արդեն ընդունվել են աշխատանքի
- ✓ Սիսիանում Տիգրան Տիգրանյան ԱԶ հաշվապահական հաշվառման գրասենյակում արտադրական պրակտիկա է անցել 3 երիտասարդ

- ✓ Բարձրացել է շահառու համայնքների երիտասարդների իրազեկության մակարդակը ՋՏԿ-ների կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ

Բացահայտվել են Գորիսի տարածաշրջանի/Շինուհայր, Խոտ, Հալիձոր, Քարահունջ/ գյուղական համայնքներում գործազուրկ երիտասարդներ և ուղղորդվել Գորիսի Ջբաղվածության տարածքային կենտրոն գրանցվելու նպատակով/Օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում 35 երիտասարդներ ուղղորդվել են ՋՏԿ-ներ, որոնցից 18-ն արդեն գրանցվել են/:

Ծրագրի շրջանակներում 2014թ. օգոստոսի 8-ին հուշագիր է կնքվել «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնե ՊՈԱԿ-ի և ԳՈԲ ՎԿ-ի միջև ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման ուղղությամբ համատեղ աշխատանքների իրականացման վերաբերյալ:

🚩 «ՏԻՄ-երի վերապատրաստման դասընթացների իրականացում 2»

Պայմանագրի համարը	ARM-C3-GCSO-S-LGT-2014-02
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի մարզեր
Ծրագրի տևողությունը	2013թ. դեկտեմբեր-2014թ. հունիս
Դրամաշնորհի չափը	8.099.900 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	3.111.760 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	11.211.660 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Բարելավել Հայաստանի հարավային մարզերի համայնքների ՏԻՄ-երի և ՀԱԽ-երի ինստիտուցիոնալ կարողությունները՝ կազմակերպելով ՏԻՄ-երի համար խորացված վերապատրաստման դասընթացներ և իրականացնելով կարողությունների զարգացման նպատակային ծրագրեր:

Համագործակից կազմակերպություն

- Սիսիանի համայնքների միություն

Շահառուներ

Հայաստանի հարավային մարզերի^a ՔԻ-ի շահառու 14 համայնքի Համայնքային ակտիվ խմբերի/ՀԱԽ-երի և ՏԻՄ-երի ներկայացուցիչներ

Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում ՏԻՄ ոլորտի 4 հնգօրյա և համակարգչային հմտությունների 4 երկօրյա վերապատրաստման դասընթացներ են իրականացվել Սյունիքի և Վայոց ձորի մարզերի՝ ՔԻ շահառու 14 համայնքների /Շինուհայր, Քարահունջ, Հալիձոր, Խնձորեսկ, Սիսիան, Սպանդարյան, Աշոտավան, Կապան, Արծվանիկ, Մեղրի, Վայք, Գոմք, Գետափ, Բարձրունի/ Համայնքային ակտիվ խմբերի/ՀԱԽ-երի ներկայացուցիչների համար: Դասընթացները ներառել են հետևյալ թեմաները՝

- ✓ ՏԻՄ օրենսդրություն
- ✓ Առաջնորդություն
- ✓ Ռազմավարական պլանավորում
- ✓ Համայնքի բյուջե
- ✓ Գնումների գործընթաց
- ✓ Մասնակցային և թափանցիկ կառավարում
- ✓ Հաղորդակցում ՏԻՄ-ի ներսում

Ծրագրի շրջանակներում ՏԻՄ ոլորտի 5 մեկօրյա խորացված դասընթացներ են իրականացվել ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի ծրագրի շահառու համայնքների ղեկավարների և ՏԻՄ-երի ներկայացուցիչների համար: Խորացված դասընթացների թեմաները ներառել են՝

- ✓ Հանրային խոսք
- ✓ Համայնքը որպես վարչական միավոր
- ✓ Համայնքի բյուջե
- ✓ Գնումների գործընթացի կազմակերպում
- ✓ Ֆոնդահայթայթում

ՏԻՄ-երի կարողությունների զարգացման փոքր դրամաշնորհներ են տրամադրվել ծրագրի շահառու 3 համայնքների ՏԻՄ-երին՝ Վայք, Գոմք, Քարահունջ:

Որպես ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքների ամփոփում, ծրագրի ավարտին միջհամայնքային փորձի փոխանակման 3 ուսուցողական այց է իրականացվել Քարահունջ, Սիսիան և Վայք քաղաքներում:

Տպագրվել և շահառու համայնքներում բաժանվել է

- ✚ «Առողջության պահպանման իմ իրավունքը»

Պայմանագրի համարը	ARM-DG-HRRL-2014-05
Դոնոր կազմակերպությունը	Քաունթերփարթ ինթերնեշնլ
Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Սյունիքի մարզ
Ծրագրի տևողությունը	2013թ. հոկտեմբեր – 2014թ. մայիս
Դրամաշնորհի չափը	7.523.320 ՀՀ դրամ
Կազմակերպության ներդրումը	1.981.000 ՀՀ դրամ
Ընդհանուր գումարը	9.504.320 ՀՀ դրամ

Ծրագրի նպատակը

Նպաստել գյուղական համայնքների բնակաչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը:

Շահառուներ

